ԱՐԱՄ ՆԱՀԱՊԵՏԸ ԿԱՊԱԴՈՎԿԻԱՅՈՒՄ
(Մի վարկածի առթիվ)

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Վ. ՔՈՍՅԱՆ

Մովսես Խորենացու և մյուս հայ պատմիչների երկերում պահպանված տեղեկությունները միանշանակ վկայում են հայոց նահապետների շարքում Հարմայի որդի Արամի ունեցած բացառիկ կարևոր դերի մասին: Արամին նախորդած և հաջորդած նահապետներից ոչ մեկի օրոք «նախնական Հայքը» հարևանների հետ փոխհարաբերություններում այնքան մեծ հաջողություններ չի ունեցել, որքան Արամը: Եթե մյուս բոլոր նահապետները, բացառությամբ, թերևս, Պարույր Սկայորդու, կամ պաշտպանողական պատերազմներ են մղել Միջագետքի տիրակալների դեմ, կամ ուղղակի որևէ արժանահիշատակ դործ չեն կատարել, բացի Հայաստանի տարբեր շրջանները յուրացնելուց, ապա այլ է Արամի ֆենոմենը: Շնորհիվ Նյուքար Մադեսի, Բաբշամի և Պայապիս Քաաղեայի դեմ տարած փայլուն հաղթանակների, նա «ընդարձակել զսահմանս Հայոց յամենայն կողմանց. յորոյ անուն և զաշխարհս մեր անուանեն ամենայն ազգք, որպէս Յոյնք՝ Արմէն, իսկ Պարսիկք և Ասորիք՝ Արմէնիկք» (Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց. Ա. ԺԲ): Ըստ Խորենացու, Արամի օրոք Հայաստանը մեծ հեղինակություն էր ձեռք բերել հարևանների մոտ և նրանք այսուհետև մեր ժողովրդին Արամի անունով սկսել են անվանել Արմեն/Արմենիկք:

Հայոց ծագումնարանությանը և վաղ պետականության խնդիրներին նվիրված հետազոտություններում Արամ նահապետի պատմականության հարցը դերազանցապես մեկնաբանվել է որպես Հայկական լեռնաշխարհի քաղաքական միավորների՝ հարևան պետությունների դեմ մղած դարավոր պայքարի արտացոլում ժողովրդի հիշողության մեջ[1]: Այս կարծիքը հենվում է այն մտայնության վրա, որ Ուրարտուից առաջ Հայկական լեռնաշխարհում չէր կարող գոյություն ունենալ նման հեռահար արշավանքների ընդունակ պետություն. նույնը նաև ուրարտական փուլում (մ.թ.ա.IX–VII դդ.), Ուրարտուից բացի, որևէ այլ քաղաքական միավորի առնչությամբ: Վերջերս առաջ քաշվեց մի վարկած, ըստ որի Հայկյան Արամ նահապետը նույն ինքը ասորեստանյան աղբյուրների Արամեն է (մասնագիտական հրատարակություններում՝ Ուրարտուի արքա), որն իշխել է ոչ թե

---

1 Տե՛ս, օրինակ, Հ ա կ ո բ Մ ա ն ա ն դ յ ա ն. Երկեր. հ.Ե, Երևան, 1984, էջ.559.

Վանում կամ դրա մոտակայքում, այլ ուրարտական աղբյուրների Էթիունիում, Արամանյակ նահապետի՝ դեպի Արագածոտն տեղաշարժվելուց հետո[2]:

Հայոց ծագումնաբանության խնդիրների ուսումնասիրությունը մեծապես կախված է այսօր մասնագետների տրամադրության տակ գտնվող տարաբնույթ սկզբնաղբյուրների գիտական համագրման ասպարեզում ունեցած հաջողությունից, գրանցում սլատմականը առասպելականից զատելու ընդունակությունից: Այս տեսանկյունից սլիտի մոտենալ վերջերս Արամ նահապետի առեղծվածի, Պատմահոր վերը հղված հատվածի մեկնաբանության ուրույն փորձով մասնագետների ուշադրությունը բևեռած մի աշխատությանը: Հայոց հին պատմության և պատմական աշխարհագրության առաջատար մասնագետ Բ. Հ. Հարությունյանի ոչ մեծածավալ ուսումնասիրությունը[3] եզակի փորձ է Հայկական լեռնաշխարհի պատմության մի բավական խրթին ժամանակաշրջանի ընթացքում (մ.թ.ա.VII–VIդդ.) տեղ գտած իրադարձությունների պարզաբանման ասպարեզում: Իրեն հատուկ մանրակրկիտ, ոչ ստանդարտ լուծումներով Բ. Հարությունյանը առաջարկում է հետևյալ վարկածը:

Արամ Նահապետը ոչ այլ ոք է, քան ուրարտական վերջին արքաներից մեկը՝ Էրիմենան, նույն ինքը Քսենոփոնի «Կյուրոպեդիայում» հիշատակվող «Արմենիայի» անանուն արքան՝ Տիդրանի հայրը: Հիմնականում ժամանակագրական ճշգրտումների հիման վրա Բ.Հարությունյանը ենթադրում է, որ Էրիմենա-Արամը իսկապես կարող էր հաջող պատերազմներ վարել երեք ուղղություններով՝ 1) մարերի դեմ (սկյութների առաջնորդ Մադյուես = Նյուքար Մադես, մ.թ.ա. 631թ.), 2) Ասորեստանի դեմ (մ.թ.ա.625 թ. հետո՝ որպես մարերի գաչնակից), 3) դեպի Կապադովկիա (Պայապիս Քաաղեայ = Լիգիա), ինչպես ներկայացված է Պատմահոր մոտ: Եվ այս բոլորը իրադարձությունները մ.թ.ա. VII դարի վերջին երրորդի ընթացքում:

---

2 Այս տեսությունը ներկայացվեց պ.գ.թ. Արտակ Մովսիսյանի՝ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Սեպագրական քաղաքակրթությունների բաժնի ընդլայնված նիստում (1998թ. նոյեմբերի 25) ընթերցված զեկուցման մեջ: Արամ նահապետի անձնավորման ևս մեկ տարբերակ է առաջարկում խեթագետ Վ.Խաչատրյանը: Ըստ նրա, Արամը Էթիունիի Հայկական թագավորության մ.թ.ա. 891–834 թթ. իշխած արքան է եղել, ուրարտական Արամեի ժամանակակիցը (Վ. Ն. Խաչատրյան. Հայաստանը մ.թ.ա.XV–VII դարերում. Երևան, 1998, էջ.106–111): Այս տեսակետը առաջադրվել էր դեռ 1980 թ. (В. Х а ч а т р я н. Страна Хайк в составе Урарту.-Вестник обществ. наук, 1980, N6, с.101-112), որտեղ Անուշավանից հետո «Հայքում» հայկյաններից հետո իշխանությունը զավթած բռնակալները նույնացվում էին Ուրարտուի արքաների հետ: Երկու հեղինակների վերականգնումը հենվում է հայկյան նահապետների կառավարման ժամանակագրության՝ Մ.Ջամչյանի ներկայացրած ցուցակի հավաստիության ընդունման վրա:

3 Բ. Հ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների և Առաջավոր Ասիայի հնագույն պատմության մի քանի խնդիրների շուրջ (մ.թ.ա.VII–VI դդ.). Երևան, 1998:

Սույն հոդվածում, որն ամենևին գրախոսություն չէ, քանի որ բևեռվում է քննարկվող ուսումնասիրության մեջ արծարծված բազմաթիվ ընդհանուր և մասնավոր խնդիրներից միայն մեկի վրա, կփորձենք ստուգել հեղինակի մի թեզի հիմնավորվածության աստիճանը: Նպատակագրվելով ապացուցել մ.թ.ա.VII դարի վերջին երկու տասնամյակների ընթացքում Էրիմենա-Արամի կատարած նվաճումների հավաստիությունը Կապադովկիայում, հեղինակը փորձել է լուծել մի շարք բարդություններ:

Առաջինը «Պռոտին Արմենիա» (= Πρωτην Αρμενιαν «Առաջին Հայք») տերմինի ավանդական մեկնաբանության ժխտումն է: Ակադ. Ս. Երեմյանի կողմից առաջարկված «Նախնական Հայաստան» թարգմանության փոխարեն առաջարկվում է «Գրավյալ Հայաստան» (մարերեն *paretan Armenian, որտեղ առաջին բառը կարող էր չփոթվել հունարեն* πρωτην-*ի հետ) (էջ.78-79): Այնուհետև ստուգաբանվում է Պայապիս Քաաղեայի անունը: Այստեղ արդեն հեղինակը լեզվաբանական և ժամանակագրական զգալի ճշգրտումներից հետո հանգում է այն եզրակացության, որ Արամի հակառակորդը Կապադովկիայում ոչ այլ ոք էր, քան Լիդիայի արքա Սադիատտեսը՝ Արգիսի որդին: Ընդ որում առաջինը չի դիտվում որպես արքա, այլ միայն արքայորդի, քանի որ «Պայապիս» անունը ստուգաբանվում է հայերեն* պայազատ *«ժառանգորդ, գահաժառանգ» բառի միջոցով. «Պայապիս» պիտի նշանակեր ընդամենը «Արգիսի հաջորդ, թագաժառանգ» (Պայապիս անվան երկրորդ բաղադրիչ «Ապիսը» գիտվում է որպես Արգիսի աղավաղված ձևը):*

Եվ, վերջապես, Բ.Հարությունյանը եզրակացնում է. «Հայոց պատմության մեջ բացառվում է որևէ մեկ այլ ժամանակաշրջան, որ հայերին հաջողված լինի իշխել հիշյալ տարածքներին, ուստի թե Կեսարիայի շրջանը և թե Ուռհան կարող էին գրավված լինել VII դարի վերջին երեսնամյակում» *(էջ 70):*

Այժմ փորձենք տեսնել, թե որքանով է փաստարկված հեղինակի վարկածը՝ կապված Էրիմենա-Արամի փոքրասիական հեռահար արշավանքի հավաստիության հետ: Հնարավոր էր արդյոք նման արշավանք մ.թ.ա.VII դարի վերջին քառորդում: Մի կողմ թողնելով խնդրի լեզվաբանական մասը (Պռոտին Արմենիա, Պայապիս Քաաղեայ), ներկայացնենք ուսումնասիրվող ժամանակաշրջանի Առաջավոր Ասիայի քաղաքական իրադարձությունների օբյեկտիվ պատկերը, որ բավական հստակ գծագրվում է գերազանցապես ասորեստանյան արձանագրությունների, ավելի նվազ չափով՝ անտիկ աղբյուրների հետազոտության շնորհիվ:

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՓՈՔՐ ԱՍԻԱՆ Մ.Թ.Ա..VII ԴԱՐՈՒՄ

Մ.թ.ա.705 թ. Թաբալում (հարավային Փոքր Ասիա) Սարգոն II-ի կրած ճակատագրական պարտությունից[4] *հետո Ասորեստանի գերիշխանությունը Տավրոսից հյուսիս ընկած փոքրասիական երկրների և Դաշտային Կիլիկիայի (ասորեստանյան աղբյուրներում՝ Կուե) նկատմամբ փաստորեն դարձավ ձևական, եթե ոչ ընդհանրապես վերացավ*[5]*:*

Սարգոնի հաջորդ Սինաքերիբի (մ.թ.ա.704–681 թթ.) օրոք ասորեստանյան զորքերը երկու անգամ՝ մ.թ.ա. 696 և 695 թթ., փորձեցին վերահաստատել իրենց կորսված ազդեցությունը: Առաջին դեպքում արշավանքն ուղղված էր Թաբալյան Իլլուբրու քաղաքի կառավարիչ Կիրուայի, նրա դաշնակից Խիլակկուի և Ինդիրա ու Տարզու (վերջին երկուսը՝ անտիկ աղբյուրների Անխիալե և Տարսուս) քաղաքների դեմ[6]*: Երկրորդը Թիլգարիմմուում պետություն հիմնած ոմն Գուրդիի դեմ ձեռնարկված արշավանքն էր*[7]*: Երկու դեպքում էլ, չնայած Սինաքերիբի հավաստիացումներին, հաշվի առնելով քիչ ավելի ուշ շրջանի իրադարձությունները, Ասորեստանի հաջողությունները անվերապահորեն կարելի է անցողիկ համարել:*

Սինաքերիբի որդու՝ Ասարհադդոնի (մ.թ.ա.680–669 թթ.) արձանագրությունները կարևոր տեղեկություններ են հաղորդում Տավրոսից հյուսիս ընկած արևելափոքրասիական երկրներում տիրող իրավիճակի մասին: Այսպես, մ.թ.ա.679 թ. Ասարհադդոնը Խուրուշնայում (Թարալի տարածքում)[8] *պարտության է մատնում կիմմերական առաջնորդ Թեուշպային*[9]*: Երկու տարի անց՝ մ.թ.ա.677–676 թթ. նա հաշվեհարդար է տեսնում Կունդուի և Սիսսուի (Դաշտային Կիլիկիայում, հետագայի Անարզաբա և Սիս)*

---

4 A. K. G r a y s o n. Assyrian and Babylonian Chronicles. Locust Valley/New York, 1975, Chr.1, p.76; J. D. H a w k i n s. The Neo-Hittite States in Syria and Anatolia.– In: Cambridge Ancient History, V. III/I, 1982, p. 422.

5 *Այս ժամանակաշրջանի իրադարձությունների մասին տե՛ս* J. D. H a w k i n s. Cambridge Ancient History. Vol.III/1, 1982, p.420 ff.; И. М. Д ь я к о н о в. Малая Азия и Армения около 600 г. до н.э. и северные походы вавилонских царей.-Вестник древней истории, 1982, N1, с.47 сл.; *Տես Ա. Ք ո ս ջ ա ն. Տուն Թորգոմայ. Երևան, 1998, էջ 28–32:*

6 D. D. L u c k e n b i l l. Ancient Records of Assyria and Babylonia. Vol.II, Chicago, 1927 (ARAB), §§ 286-289. *Իլլուբրուն նույնն է, ինչ խեթական աղբյուրների* Ellibra-*ն և Սարգոն II-ի կողմից հիշատակվող* Ellibir-*ը: Առաջարկվել է նույնացնել ժամանակակից Նեմրունի (միջնադարյան Լամբրոն) հետ* (E. F o r r e r. Die Provinzeinteilung des assyrischen Reiches. Leipzig, 1920, S.79):

7 ARAB II, *§§* 290–292.

8 *Խուրուշնան նույնն է ինչ խեթական աղբյուրների* Խուպե/իսնան, *անտիկ աղբյուրների Կիբիստրան. տեղադրվում է ժամանակակից Էրեղլի քաղաքից շուրջ 15կմ արևելք՝ Կարահյոյուք կոչվող բլրի տեղում* (J.Garstang and O.R.Gurney. The Geography of the Hittite Empire. London, 1959, p.72, n.1):

9 ARAB II: *§* 516, 530, 546; *նաև* A. K. G r a y s o n. Assyrian and Babylonian Chronicles, Chr.14, line 9, p.125.

արքա Սանդուարրիի հետ[10]: Անհաջող էր Ասարհադդոնի մ.թ.ա.675 թ. արշավանքը ընդդեմ Մելիդի արքա Մուգալլուի: Այդ է վկայում այն փաստը, որ արքայի պաշտոնական արձանագրություններում արշավանքի մասին որևէ հիշատակություն չկա. մեր տեղեկությունը պահպանվել է միայն չեզոք աղբյուրում՝ Բաբելոնյան ժամանակագրություններում[11]: Մասնագետների միահամուռ կարծիքով, այս պահին Մուգալլուն Ասորեստանից լիովին անկախ կառավարիչ էր, ինչպես և նրան ժամանակակից, հարևան Թաբալի կառավարիչ Իշկալլուն[12]:

Այսպիսով, մ.թ.ա.705 թ. մինչև Աշշուրբանապալի կառավարման սկիզբն ընկած ժամանակաշրջանը արևելյան և հարավ-արևելյան Փոքր Ասիայում Սարգոն II-ի երկու հաջորդների՝ Սինաքերիրի և Ասարհադդոնի օրոք տեղի էր ունենում մի քաղաքական պրոցես, որը կարելի է բնորոշել հետևյալ կերպ:

Սարգոնի փոքրասիական քաղաքականության հետևանքով այս տարածաշրջանի լուվիական պետությունները անկում ապրեցին: Դրանում, թերևս, վճռորոշ դեր խաղաց լուվիական պետությունների արքայատոհմերի, ազնվականության և ընդհանրապես բնակչության լայն զանգվածների տեղահանությունը, որը լավ վկայված է ասորեստանյան տեքստերում[13]: Սակայն լուվիական պետականության անկումը Ասորեստանին չտվեց սպասված արդյունքները, քանի որ այն ուղեկցվում էր մեկ այլ պրոցեսով՝ տարածաշրջանում նկատվում էր քաղաքական նոր ուժերի վերելք: Մ.թ.ա.VII դարի առաջին կեսին այստեղ հիշատակվող Մելիդի, Թաբալի և Խիլակկուի պետությունները, անկասկած, այլ էթնիկական բովանդակություն ունեին: Այդ մասին պարզորոշ վկայում են ինչպես դրանց արքաների ոչ խեթա-լուվիական անունները (Գուրդի, Մուգալլու, Իշկալլու)[14], այնպես էլ լուվիական պետություններում լայնորեն կիրառվող պաշտոնական գրի (փոքրասիական հիերոգլիֆիկայի) ավանդույթի կտրուկ ավարտը:

---

10 Սիսսուն նույնն է ինչ Կիլիկյան պետության Սիս մայրաքաղաքը, իսկ Կունդուն՝ Անարզարան (M. G o u g h. Anazarbus.– Anatolian Studies 2, 1952, p.91ff.):

11 A. K. G r a y s o n. Op.cit., Chr.14: MU VI^{kám} ummani^{me} ^{kur}AŠ-Šur ana ^{kur}Mi-li-du [ittal]ku^{meš} ina muhhi ^{m}Mu-gal-lu ittadu^{meš} «Վեցերորդ տարի. Ասորեստանի զորքը [արշավ]եց Մելիդ (և) ճամբար դրեց Մուգալլուի դեմ» (p.126): Բաբելոնյան ժամանակագրություններում սովորաբար տրվում է իրադարձությունների օբյեկտիվ շարադրանք, առանց մեկնաբանությունների: Եթե Ասարհադդոնը գրված լիներ Մելիդը, ապա դա անպայման կնշվեր, ինչպես առկա է նույն տեքստում հիշատակվող մյուս իրադարձությունների առնչությամբ: Օրինակ, նախորդող հատվածում խոսվում է Սիդոնի արքայի գլխատման մասին:

12 J. D. H a w k i n s. Cambridge Ancient History. Vol.III/1, 1982, p. 428; И. М. Д ь я к о н о в. Малая Азия и Армения..., с.60.

13 Տե՛ս Ա. Ք ո ս ջ ա ն. Տուն Թորգոմայ, էջ 18–19:

14 Այս անուններից առաջինի կապը Փոյուգիայի արքա Գորգիոսի անվան հետ ակնհայտ է, սակայն պարզ չէ դրա ծագումը: Ինչ վերաբերում է հաջորդ երկուսին, ապա դեռևս հայտնի չեն դրանց հստակ զուգահեռները ինչպես փոքրասիական, այնպես էլ մյուս լեզուներում:

Փոքր Ասիայի լուվիական պետականության այսօրինակ էվոլյուցիայի կրողների խնդիրը առայժմ մասնագետների շրջանում լուրջ քննարկման նյութ չի դարձել, որի պատճառը գլխավորապես համաժամանակյա սկզբնաղբյուրների պահպանած սուղ տեղեկություններն են: Դրանք, փաստորեն, սահմանափակվում են Մելիդի և Թաբալի վերոհիշյալ մի քանի արքայանուններով: Կարելի է արդյոք այստեղ տեսնել կիմմերներին: Այս տարբերակը մասնագիտական հրատարակություններում առկա է բավական վաղուց, կապված մ.թ.ա. 705 թ. Սարգոնի հակառակորդ Գուրգիի անվան կիմմերական պատկանելության մասին ենթադրության հետ: Սակայն այժմ, հիմնավոր փաստերի ճնշման տակ, պիտի հրաժարվել Գուրգիի կիմմերական ծագման մասին ենթադրությունից, որը ավելի մտահայեցողական է, քան հենվում է որևէ լուրջ փաստարկի վրա: Բանն այն է, որ Գուրգի անունը արևելյան Փոքր Ասիայում վկայված է դեռ մ.թ.ա.718 թ. սկսած, ի դեմս թաբալյան երկրներից մեկի՝ Ատունայի արքա Կուրտիսի[15]: Վերջինս ներկայացնում էր մի արքայատոհմ, որն իշխել է այստեղ առնվազն մ.թ.ա.VIII դարի կեսերից, եթե ոչ ավելի վաղ: Դատելով մ.թ.ա.VIII դարի վերջին քառորդում Ասորեստանի և փոքրասիական պետությունների փոխհարաբերություններից, Թաբալի տարածքում արդեն այս շրջանում ոչլուվիական տարրը սկսում է զգալի ակտիվություն ցուցաբերել: Ընդ որում, հենվելով Սարգոն II-ի տեքստերի վրա, կարելի է մեծ հավանականությամբ պնդել, որ Ասորեստանի արքան սկզբնական շրջանում որոշակիորեն օգտագործել է այս ուժերին ընդդեմ տեղի լուվիական արքայատոհմերի անջատողական քաղաքականության[16]: Կիմմերների ներկայության համար մ.թ.ա.VIII դարի կեսերը շատ վաղ է: Այստեղ նրանց մասին առաջին հավաստի հիշատակությունը հաջորդ՝ մ.թ.ա.VII դարի 70-ական թթ. է վերաբերում: Խոսքը կիմմերների կողմից Փռյուգիայի մայրաքաղաք Գորդիոնի նվաճման և նրա արքա Միդասի ինքնասպանության մասին է[17]: Շուրջ երեսուն տարի անց՝ մ.թ.ա.644 թ. Աշշուրբանապալի ժամանակաշրջանի տեքստերը հայտնում են կիմմերական առաջնորդ Թուգդամմեի (նույնն է ինչ անտիկ աղբյուրների Լիգդամիսը՝ Λυγδαμις) կողմից Լիդիայի մայրաքաղաք Սարդեսի նվաճման և մարտում նրա արքա Գիգեսի (Գուգգու) զոհվելու մասին[18]:

Վերոհիշյալը թույլ է տալիս ենթադրելու, որ կիմմերներն իրոք գործել են արևելյան Փոքր Ասիայում և հարակից շրջաններում, սակայն նրանք չեն եղել նախկին լուվիական պետությունների տարածքում նոր պետականությունների ստեղծողները:

---

15 Ա. Քոսյան. Տուն Թորգոմայ, էջ 18:

16 Նույն տեղում, էջ 61–63:

17 Եվսեբիոս Կեսարացին Միդասի մահը թվագրում է մ.թ.ա. 696 թ., որը շատ վաղ է կենտրոնական Փոքր Ասիայում կիմմերների ներկայության համար (տե՛ս ստորև տեքստում):

18 ARAB II: § 785.

Այժմ անցնենք մեզ հետաքրքրող իրադարձությունների հանգամանալի քննությանը:

Աշշուրբանապալի կառավարման վերջին շրջանով թվագրվող տեքստերից մեկում հայտնվում է հետևյալը. «Մուգալլուն՝ Թաբալի արքան, ով թշնամական խոսքեր էր ասում արքաներին՝ իմ հայրերին, մեծ բաժինքով Նինվե բերեց դստերը՝՝ իր արյունից, որպես իմ հարճ և համբուրեց ոտքերս: Մուգալլուի վրա ես տարեկան հարկ դրեցի մեծ ձիերով»[19]: *Տեքստում հիշատակվող իրադարձությունը թվագրվում է Աշշուրբանապալի կառավարման առաջին տարիներով:*

Ասորեստանի արքայի վերամբարձ ոճը, իհարկե, չի կարող նշանակել Թաբալի արքա Մուգալլուի՝ գրան նախորդած պարտություն կամ անմիջական գերիշխանություն: Այդ մասին է վկայում նույն իրադարձությունը հիշատակող մեկ այլ տեքստ, ըստ որի «Առանց կռվի նա Նինվե (դեսպան) ուղարկեց, խնդրելով իմ տիրապետությունը»[20]: *Նույն տեքստում հիշատակվում է Խիլակկուի արքա Սանդասարմեի նույնանման քայլը*[21]: *Թաբալի և Խիլակկուի արքաների հետ առնչվող իրադարձությունները թվագրվում են Աշշուրբանապալի կառավարման առաջին տարիներով:*

Այստեղ են առաջին անգամ հիշատակվում Լիդիան և նրա արքա Գիդեսը. «Գուգգուն, Լիդիայի արքան, երկիր, որը ծովի մյուս կողմում է, հեռավոր վայրում, որի անունը արքաները՝ իմ հայրերը չէին լսել, իմ աստված Աշշուրը, իմ արարիչը ստիպեց նրան տեսնել ինձ երազում: Ծնկի իջիր և բռնիր Աշշուրբանապալի ոտքերը...»[22]: *Այնուհետև խոսվում է այն մասին, որ Գիդեսը երազի տպավորության տակ դեսպան է առաքում Ասորեստան՝ ողջունելու Աշշուրբանապալին. լիդիական դեսպանը Ասորեստանի արքային է հանձնում երկու շղթայակապ կիմմերական առաջնորդների, որոնք գերվել էին լիդիացիների դեմ մղված մարտում:*

Նույն տեղում հայտնվում է Ասորեստանի նկատմամբ Գիդեսի թույլ տված թշնամական արարքի և մահվան մասին[23]: *Մասնավորապես ասվում է, որ Գիդեսն այնուհետև այլևս դեսպան չի ուղարկել Ասորեստան, որպեսզի նրա միջոցով կարողանար ստանալ Աշշուրբանապալի ողջույնը: Փոխարենը նա օգնական զորք է ուղարկում Եգիպտոսի արքային (Պսամմետիքոս I), որն այդ պահին արդեն թոթափել էր Ասորեստանի լուծը: Այդ պատճառով Աշշուրբանապալը անիծում է Գիդեսին, որից հետո կիմմերները ներ-*

---

19 *ARAB II: §§ 781, 848. Այս և ստորև հղվող երեք հաղորդումները (Խիլակկուի և Լիդիայի մասին) գալիս են այսպես կոչված «Ռասսամի գլանից», որը թվագրվում է Շամաշ-դանինանների էպոնիմության տարով (մ.թ.ա.644–636 թթ. միջև):*

20 *ARAB II: § 911.*

21 *ARAB II: §§ 782, 848.*

22 *ARAB II: §§ 784, 849 (ասվում է, որ կիմմերական առաջնորդները բերվել են երկաթե վանդակի մեջ դրված), 909, 910.*

23 *ARAB II: § 785.*

խուժում են Լիդիա և սպանում նրան: Գահի վրա Գիգեսին փոխարինած որդին ընդունում է Աշշուրբանապալի գերիշխանությունը:

Ինչ եզրակացությունների կարելի է հանգել Աշշուրբանապալի վերը հղված տեքստերի հիման վրա:

1. Թաբալը (=նախկին Մելիդի և բուն Թաբալի տարածքը) և Խիլակկուն չեն նվաճվել Ասորեստանի կողմից: Դեսպանության առաքումը Ասորեստան կարելի է վստահաբար դնահատել որպես նոր գահ բարձրացած Աշշուրբանապալի հետ նորմալ հարաբերություններ հաստատելու փորձ, հատկապես վերջինիս հոր՝ Ասարհադդոնի հետ Մուդալլուի ունեցած թշնամական հարաբերությունների պայմաններում (մ.թ.ա.675 թ. արշավանքը, տես վերը):

2. Լիդիայի արքա Գիգեսի դեսպանությունը Ասորեստան, որը նույնպես թվագրվում է Աշշուրբանապալի կառավարման առաջին տարիներով (հարկ է նշել, որ Գիդեսի դեսպանությունը հիշատակվում է Թաբալի և Խիլակկուի դեսպանությունների մասին պատմող միևնույն տեքստերում), ակնհայտորեն ուղղված էր կիմմերների դեմ Ասորեստանի օգնության ակնկալմանը:

3. Կիմմերների կողմից Լիդիային հասցված ծանր պարտությունը, Գիդեսի զոհվելը և նրա որդու դեսպանությունը Ասորեստան պիտի տեղի ունենար նախորդ կետերում հիշատակված իրադարձություններից շուրջ քառորդ դար հետո, այսինքն, մ.թ.ա.644 թ. մոտերքում:

Այժմ հետագա իրադարձությունների մասին:

Մ.թ.ա.644 թ. կիմմերները Թուգդամմեի գլխավորությամբ դրավում են Լիդիայի մայրաքաղաք Սարդեսը. Գիդեսը զոհվում է մարտում: Այս իրադարձության մասին տեղեկություններ են պահպանվել ինչպես սեպագրական, այնպես էլ անտիկ աղբյուրներում[24]: Հոր մահից հետո Գիդեսի որդին՝ Արդիսը դեսպանություն է ուղարկում Ասորեստան, հավանաբար, ակնկալելով վերջինիս աջակցությունը կիմմերների նոր արշավանքի դեպքում: Հետագա իրադարձությունների մասին պահպանվել են բավական հստակ տեղեկություններ: Նինվեից հայտնաբերված մի տեքստում[25], որը թվագրվում է մոտավորապես մ.թ.ա.640 թ., հիշատակվում է Թուգդամմեն՝ «Սակայի և Գուտումի արքան» *(տեքստում ներկայացված են քիչ ավելի*

---

24 *Տես* W. Rollig. Gyges.– In: Realexikon der Assyriologie, Bd.III/9, 1971, S.720f.

25 R. Campbell-Thompson and R. W. Hutchinson. The British Museum Excavations at Nineveh, 1931–32.–Annals of Archaeology and Anthropology 20, 1933, lines 141ff., 158ff. *Մ.թ.ա.639թ. հետո կազմված մի ասորեստանյան տեքստում (VS 20) Թուգդամմեն կոչվում է «Ումման-մանդայի արքա»: «Սակերի արքա» ընթերցումը, որ ընդունվում է մասնագետների մեծ մասի կողմից, այնուամենայնիվ, որոշ կասկածների տեղիք է տալիս. առաջարկվել է նաև* LUGAL Šad-da!-a-a-u Gu-tu-um^{KI} *տարբերակը («լեռնցիների (և) Գուտումի արքա»): Ասարհադդոնի և Աշշուրբանապալի օրոք «Ումմանմանդա» տերմինի կիրառության համար տե՛ս* G. Komoróczy. Umman-Manda.– Acta Antiqua Academiae Scientiarum Hungaricae. T.XXV, Fasc.1–4, 1977, S.43 ff.

վաղ շրջանի իրադարձությունները): Այստեղ խոսվում է Թուգդամմեի և Թաբալի արքա Մուգալլուի որդու դաշինքի մասին: Ըստ տեքստի, սկզբում Թուդդամմեն արշավել է դեպի Ասորեստանի հյուսիս-արևմտյան սահմանները, սակայն, փոխելով մտադրությունը, դադարեցրել է թշնամական գործողությունները և նույնիսկ հարկ ուղարկել Ասորեստան: Բայց որոշ ժամանակ անց նա կրկին սկսել է թշնամական գործողությունները, այնուհետև հիվանդացել է և մահացել[26]: Այս իրադարձության մասին կա մեկ այլ հիշատակություն[27]: Թուգդամմեի մահից հետո նրան հաջորդել է որդին՝ Սանգաքշատրուն:

Վերոհիշյալ աղբյուրներից բխում են կարևոր եզրակացություններ:

Սարդեսի գրավման և Գիգեսի մահվան տարում (մ.թ.ա.644 թ.) Թաբալի և Թուդդամմե-Լիգդամիսի պետության միջև հաստատվել էին դաշնակցային հարաբերություններ: Մուգալլուին փոխարինել էր նրա որդին[28], որի անվան միայն վերջավորությունն է պահպանվել՝ [...]-nuuh[29]: Թուգդամմեի կիմմերների և Թաբալի ու Խիլակկուի փոխհարաբերությունների մասին նախորդող փուլում որևէ տեղեկություն հայտնի չէ: Սակայն որոշ փաստարկների ճնշման տակ կարելի է ենթադրել, որ դրանք առնվազն թշնամական չեն եղել: Ստորև ներկայացնենք այդ հարաբերությունների խնդիրը վերը շարադրված նյութերի հիման վրա:

Այսպես, կիմմերների առաջին հիշատակությունը Թաբալում թվագրվում է մ.թ.ա. 679 թ., երբ Ասարհադդոնին հաջողվեց պարտության մատնել նրանց առաջնորդ Թեուշպային: Այս իրադարձությունից չորս տարի անց Ասարհադդոնը անհաջող արշավանք է կազմակերպում Մելիդի արքա Մուդալլուի դեմ: Իսկ Աշշուրբանապալի կառավարման սկզբներին Մուդալլուն արդեն միացյալ Մելիդ-Թաբալի արքան էր: Ընդհուպ մինչև Թուգդամմե-Լիգդամիսի կողմից Սարդեսի նվաճումը կիմմերները բնակվել և գործել են արևելյան Փոքր Ասիայում, ընդ որում դաշնակցելով Թաբալի արքայի՝ Մուդալլուի որդու հետ:

Կիմմերների և Մելիդ-Թաբալի թագավորության փոխհարաբերությունների խնդրի պարզաբանումը անխուսափելիորեն առաջադրում է եր-

---

26 Թուգդամմե-Լիգդամիսի մահվան մասին տեղեկություններ են հաղորդվում նաև անտիկ աղբյուրներում (Կալլիմաքոս, Ստրաբոն, Հեսիքիոս, հղվում է ըստ A. Spalinger. The Date of the Death of Gyges and its Historical Implications.– Journal of American Oriental Society 98, 1978, N4, p.407, n.38): Ըստ դրանց, Լիգդամիսը սպանվել է Կիլիկիայում:

27 M. Streck. Assurbanipal und die letzten assyrischen Konige bis zum Untergange Niniveh's. Leipzig, 1916, VS 20.

28 Հայտնի է, որ Մուգալլուն դեռ կենդանի էր մ.թ.ա. 651 թ. (տե՛ս F. M. Fales. Notes on Some Nineveh Horse Lists – Assur I/3, 1974, p.144): Այս եզրակացությունը հենվում է մ.թ.ա.651թ. թվագրվող մի տեքստի վրա, որտեղ հիշատակվում է նույն տարում Մուգալլուի՝ Ասորեստան ուղարկված հարկը (589 ձի և 8 ջորի):

29 R. Campbell–Thompson and R. W. Hutchinson. Annals of Archaeology and Anthropology 20, 1933, p.88.

կու այլ կարևոր պրոբլեմներ, այն է, 1) որտեղ էր գտնվում կիմմերների բնակության տարածքը, 2) ինչն էր միավորում երկու քաղաքական ուժերին:

Առաջին հարցի պատասխանը, թվում է, կապված չէ մեծ բարդություններ հետ: Մելիդ-Թաբալի տարածքը հիմնական գծերով կարելի է ներկայացնել, հենվելով նախորդ մ.թ.ա.VIII դարի հայտնի աղբյուրների վրա: Այս պետությունը պիտի ընդգրկեր մոտավորապես արևելքում Եփրատից մինչև արևմուտքում Հալիսի մեծ ոլորանի շրջանը, ներառնելով ժամանակակից Կայսերին՝ անտիկ աղբյուրների Արգեոս լեռան հետ միասին, հարավում բնական սահման ունենալով Տավրոսի լեռնաշղթան[30]: Նկատի ունենալով կիմմերների առաջնորդ Թեուշպայի գեմ Ասարհագդոնի մղած ճակատամարտը Խուբուշնայի շրջանում (անտիկ աղբյուրների Կիբիստրա, ժամանակակից Էրեղլի), կիմմերների հաճախակի արշավանքները դեպի Լիդիա, ինչպես նաև հայկական աղբյուրներում Կապադովկիային տրվող Գամիրք անվանումը, նրանց կարելի է մոտավորապես տեղադրել Մելիդ-Թաբալից հյուսիս, հյուսիս-արևմուտք:

Շատ ավելի բարդ է երկու քաղաքական միավորների փոխհարաբերությունների բնույթի պարզաբանումը: Ինչ հիմքի վրա էր ձևավորվել նրանց դաշինքը: Հաշվի առնելով կիմմերների ակնհայտ հակալիդիական և հակասորեստանյան դիրքորոշումը, կարելի էր ենթադրել գրանում նաև Մելիդ-Թաբալի մասնակցությունը: Սակայն առնվազն մ.թ.ա.668–651 թթ. ընթացքում Աշշուրբանապալի տեքստերում վկայված Մուգալլուի լոյալությունը Ասորեստանի նկատմամբ ստիպում է խուսափել Մելիդ-Թաբալին նմանօրինակ դիրքորոշում վերագրելուց: Համենայնդեպս, միայն Մուգալլուի որդու շրջանում կարող էր կիմմերների հետ դաշինքը կրել հակասորեստանյան բնույթ, այն էլ վերապահումներով:

Կիմմերների և Մելիդ-Թաբալի փոխհարաբերությունների խնդրի առնչությամբ ծագում է մի հարց, որի լուծումը կարևոր նշանակություն ունի ուսումնասիրվող ժամանակաշրջանի էթնոքաղաքական պատմության ընկալման համար: Ինչպես կարող էր պատահել, որ ենթադրաբար Կովկասյան լեռնանցքներից մեկով Առաջավոր Ասիա ներթափանցած քոչվոր կիմմերները, որոնց ավերիչ արշավանքներն ընդգրկեցին Ուրարտուից մինչև Լիդիա ընկած վիթխարի տարածքը, որևէ վնաս չպատճառեցին Մելիդին և Թաբալին: Ավելին, ինչպես տեսանք վերը, նրանց միջև առկա էին եթե ոչ դաշնակցային, ապա, առնվազն, նորմալ փոխհարաբերություններ:

Այսպես, Մելիդը գոյատևեց ինչպես մ.թ.ա.679 թ. Խուբուշնայի ճակատամարտի շրջանի իրադարձությունների (տես վերը) և մոտավորապես մ.թ.ա.675 թ. կիմմերների կողմից Փռյուգիայի մայրաքաղաք Գորդիոնի

30 Մելիդ-Թաբալի թագավորության տարածքը, թվում է, պիտի ավելի ընդարձակ լիներ, ներառնելով նաև Եփրատից արևելք ընկած որոշ շրջաններ:

նվաճման փուլում, այնպես էլ մ.թ.ա.640-ական թթ.: Այս առթիվ հարկ է նշել, որ Գ.Ա.Մելիքիշվիլու տեսակետը, թե կիմմերների փոյուգական արշավանքը տեղի է ունեցել Ուրարտուի արքա Ռուսա II-ի և Թուգդամմե-Լիգդամիսի միջև կնքված դաշինքի պայմաններում[31], որևէ լուրջ հիմնավորում չունի: Ըստ հեղինակի, այս իրադարձությունն արտացոլված է Ռուսա II-ի Ագրլջևաղի արձանագրության մեջ, որտեղ հիշատակվում են «Մուշկինի, Խաթե և Խալիտու երկրները»: Այսօր մասնագետների զգալի մասը գտնում է, որ Ռուսա II-ի արշավանքի նպատակակետ հանդիսացող այս երկրներից առաջինը՝ Մուշկինին պիտի փնտրել արևելյան Փոքր Ասիայում, քանի որ հաջորդ երկուսը ակնհայտորեն այս տարածաշրջանի երկրներ են (Խաթե=Մելիդ, Խալիտու=հայկ. Խաղտիք)[32]: Եթե այս ենթադրյալ ուրարտա-կիմմերական միացյալ արշավանքը դեպի Մելիդ և Փոյուդիա իրոք տեղի ունենար, ապա հազիվ թե Մելիդը ի վիճակի լիներ պահպանելու իր ինքնուրույնությունը: Հատկապես եթե հիշենք, որ նույն շրջանում՝ մ.թ.ա. 675 թ. Մուգալլուն ստիպել էր Ասարհադդոնին ձեռնունայն ետ վերադառնալ իր մայրաքաղաքի դարպասների մոտից (տես վերը): Եթե փորձենք վերականգնել մ.թ.ա.670-ական թվականների իրադարձությունների տրամաբանությունը, ապա կարող ենք հանգել բավական հետաքրքիր եզրակացությունների:

Որպես մեկնակետ ելնենք այն լռելյայն ընդունվող և գրեթե չվիճարկվող ենթադրությունից, որ մ.թ.ա. 714 թ. մոտերքում Ուրարտուի դեմ արշաված կիմմերները դրանից հետո ինչ-որ պահ շրջվել են դեպի արևմուտք՝ Փոքր Ասիա: Համենայնդեպս, նման ենթադրության համար բոլոր հիմքերը կան, քանի որ կիմմերների հետագա շրջանի բոլոր հիշատակությունները կապվում են այս տարածաշրջանի հետ: Երբ կարող էր դա տեղի ունենալ: Այս հարցադրումը կարևոր է այն առումով, որ մեզ բավական լավ հայտնի է Մելիդ-Թաբալի տարածքում մ.թ.ա.VIII դարի վերջին քառորդի – VII դարի առաջին կեսի ընթացքում տեղի ունեցած իրադարձությունների ընդհանուր պատկերը: Փորձենք բնութագրել տվյալ ժամանակահատվածի իրադարձությունները՝ Մելիդ-Թաբալի պատմության անցքերի լույսի տակ:

1) Մ.թ.ա.714–705 թթ.: Ուրարտուի նկատմամբ տարած հաղթանակից մինչև Մելիդ-Թաբալում ասորեստանյան տիրապետության ավարտը (Սարգոն II-ի պարտությունը և վախճանը ճակատամարտում):

Եթե կիմմերները հայտնվել են այս փուլում, ապա նրանք պիտի կամ անմիջապես ներգրավվեին Թաբալյան Ատունա պետության հակաասորեստանյան քաղաքականության ոլորտը, կամ ուղղակի անմասնակից մնային

---

31 Г. А. Меликишвили. Наири-Урарту. Тбилиси, 1954, с.314 сл.; նույն կարծիքին է Ի. Մ. Դյակոնովը՝ И. М. Дьяконов. Предыстория армянского народа. Ереван, 1968 (далее ПАН), с.171.

32 И. М. Дьяконов. ПАН, с.171.

այդ իրադարձություններին: Նկատի ունենալով կիմմերների ռազմական մեծ պոտենցիայը, որի վկայությունը նրանց զգալի ակտիվությունն էր Փոքր Ասիայում Ասարհագդոնի և Աշշուրբանապալի կառավարման շուրջ կեսգարյա ժամանակահատվածում, կարելի է ենթադրել, որ այս պահին կիմմերները դեռևս մուտք չէին գործել Փոքր Ասիա: Այլապես դժվար կլիներ բացատրել, թե ինչով էր զբաղված այստեղ ռազմատենչ, մեծաքանակ և շարժունակ այս էթնիկական խումբը: Կամ ինչու պիտի կիմմերները միանգամից համագործակցեին Ատունայի հետ, եթե նրանց նպատակը Փոքր Ասիայում հիմնավորվելն էր:

2) Մ.թ.ա.705–695 թթ.: *Արևելյան Փոքր Ասիայում Ասորեստանի տիրապետության անկումից մինչև Սինաքերիբի արշավանքը Թիլգարիմմու: Այս տասնամյակի ընթացքում Թիլգարիմմուում Գուրդիի պետության ստեղծումը:*

Կիմմերների հայտնվելը չի բացառվում, սակայն նրանց ներկայության որևէ հետք վկայված չէ: Գլխավոր քաղաքական ուժը Գուրդիի պետությունն էր, որը, ամենայն հավանականությամբ, Թաբալյան Ատունայի ժառանգորդն էր[33]:

3) Մ.թ.ա.695–679 թթ.: *Կիմմերների գալստյան ամենահավանական շրջանը, քանի որ մ.թ.ա. 679թ. նրանք Թաբալում բախվել են Ասարհագդոնի զորքի հետ: Այս մասին կարելի է գատել նաև Թեուշպայի նկատմամբ տարած հաղթանակի վերաբերյալ Ասարհագդոնի տեքստի հիման վրա:*

«Եվ [կիմմեր Թեուշպային, ումման մանդային, ում տունը հեռու է գտնվում], ես կտրեցի սրով (Խուբուշնա երկրում՝ իր ողջ զորքի հետ միասին)»[34]:

Ճակատամարտի այս համառոտ նկարագրության մեջ, մեր կարծիքով, կարևոր տեղեկություններ են պարունակվում: Խուբուշնան խեթական աղբյուրների Խուսլեսնան է, անտիկ աղբյուրների Կիբիստրան (ժամանակակից Էրեղլին)՝ Թաբալի արևմուտքում: Եթե Թեուշպայի մասին ասվում է, որ նրա բնակավայրը հեռու է գտնվում, նշանակում է, կիմմերները նոր էին հայտնվել այս վայրերում և դեռ չէին հասցրել հիմնավորվել: Կիմմերների ներկայությունը Թաբալի արևմուտքում՝ Խիլակկուի սահմանների մոտ, կարելի է գնահատել որպես ավարառուական արշավանք, քանի որ քիչ ավելի ուշ (հավանաբար, նաև այս շրջանում) հազիվ թե կիմմերները հիմնավորվեին այստեղ: Մուգալլուի Մելիդ-Թաբալի անկախ միացյալ պետության և նույնքան անկախ Խիլակկուի գոյությունը Աշշուրբանապալի օրոք (տես վերը) կարող են վկայել այս շրջանում կիմմերական հոծ զանգվածի մշտական բնակության դեմ: Հավանաբար, ճիշտ կլիներ ենթադրել,

---

33 Ա. Քոսյան. Տուն Թորգոմայ, էջ.28-32:

34 ARAB II: § 516. Հղվող տեքստի կորսված հատվածները վերականգնվում են Ասարհագդոնի՝ նույն իրադարձության մասին պատմող մեկ այլ տեքստի (ARAB II: § 530) հիման վրա:

որ Թեուշպայի կիմմերները արևելյան Փոքր Ասիա մուտք գործած առաջին խմբերից մեկն են եղել, որոնք դեռևս նստակյաց չէին դարձել: Համենայնդեպս, կարելի է ենթադրել երկու այլընտրանքային տարբերակներ. 1) Թեուշպան կարող էր առաջնորդել Փոքր Ասիայի մեկ այլ վայրում հաստատված կիմմերական զանգվածի մի մասին, 2) քոչվոր կիմմերների ջոկատները կարող էին աստիճանաբար, ժամանակի ընթացքում ներթափանցել արևելյան Փոքր Ասիա, մի բան, որի դեպքում նրանց և տեղի քաղաքական միավորների փոխհարաբերությունները կարող էին և սուր բնույթ չկրել: Այսինքն, կարելի է ենթադրել մոտավորապես այն նույն իրավիճակը, ինչպիսին վկայված է քիչ ավելի ուշ Առաջավոր Ասիայում հայտնված սկյութների և մարերի փոխհարաբերություններում: Մարերի և ասորեստանցիների պես, արևելափոքրասիական կառավարիչները կարող էին օգտագործել մարտունակ քոչվորների ռազմական ուժը, նրանց տրամադրելով անհրաժեշտ կենսատարածք և ավարառության լայն հնարավորություններ հարևանների հաշվին (Մելիդ-Թաբալի դեպքում՝ Լիդիայի): Հավանաբար, միայն սրանով կարելի է բացատրել կիմմերների ռազմաքաղաքական ակտիվության ոլորտում գտնվող փոքրասիական երկրների ինքնուրույն կեցվածքը ուսումնասիրվող ժամանակահատվածում:

Այժմ փորձենք բացահայտել ուսումնասիրվող տարածաշրջանում Խուբուշնայի ճակատամարտին անմիջապես հաջորդած իրադարձությունների ետնախորքը, որտեղ միահյուսված են Առաջավոր Ասիայի մի շարք քաղաքական ուժերի շահերը: Խոսքը մ.թ.ա. 676-673 թթ. բուռն իրադարձություններն են՝ 1) Փռյուգիայի մայրաքաղաք Գորդիոնի նվաճումը կիմմերների կողմից և Միդասի վախճանը, 2) Ռուսա II-ի արդեն նշված արշավանքը դեպի Մուշկինի, Խաթե և Խալիտու, 3) Ասարհադդոնի կողմից Շուբրիայի նվաճումը:

Վերը արդեն նշվեց այն կարծիքը, ըստ որի կիմմերների կողմից Գորդիոնի նվաճումը և Ռուսա II-ի արշավանքը դեպի Մուշկինի և հարևան երկրներ փոխկապակցված իրադարձություններ են, այսինքն, գործ ունենք ուրարտա-կիմմերական դաշինքի հետ ընդդեմ Փոքր Ասիայում հզորացած Փռյուգիայի: Սակայն իրադարձությունների նման մեկնաբանությունը դժվար է մտնում ժամանակի աշխարհաքաղաքական համատեքստ:

Իրոք, քննարկվող իրադարձությունները փոխկապակցված էին, սակայն ոչ այն առումով, ինչպես ենթադրվում է: Բանն այն է, որ կիմմերների մուտքը Առաջավոր Ասիա ավելի խորացրեց երկու տերություններում՝ Ասորեստանում և Ուրարտուում ավելի վաղ սկսված քաղաքական ճգնաժամը, ապակայունացնող գործոն հանդիսանալով կախյալ երկրների նկատմամբ նրանց ունեցած գերիշխանության պահպանման գործում: Այս պրոցեսը սկսվել էր դեռևս մ.թ.ա.VIII դարի վերջին քառորդում, սակայն մեծ ծավալ ընդունել Ասարհադդոնի և հատկապես Աշշուրբանապալի օրոք: Դրա վառ արտահայտություններից էր Ասորեստանի և Ուրարտուի հեղի-

նակության անկումը նախկին կախյալ երկրների նկատմամբ, հատկապես նրանց ազդեցության գոտիների հանդիպավայրերում: Այստեղ պարզորոշ նկատվում են կախյալ երկրների անջատողական միտումներ: Ասվածի լավագույն օրինակներից է Շուբրիայի դիպվածը, որը հանգամանորեն քննարկված է մասնագիտական հրատարակություններում[35]: Ասարհադդոնի մ.թ.ա. 673 թ. արշավանքը դեպի Շուբրիա վկայում է այն մասին, որ Ուրատուի բնօրրանի անմիջական հարևանությամբ գտնվող այս լեռնային փոքր երկիրը ակնհայտորեն հաշվի չէր նստում ինչպես ուրարտական, այնպես էլ ասորեստանյան արքաների հեղինակության հետ: Մերձավոր հարևան Շուբրիայի նկատմամբ գերիշխանության բացակայության ֆոնի վրա Ռուսա II-ի ենթադրյալ արշավանքը դեպի հեռավոր Փռյուգիա՝ կիմմերների հետ գաշնակցած, անտրամաբանական է: Հատկապես եթե նկատի ունենանք, որ տվյալ փուլում Փռյուգիան արդեն որևէ ակտիվություն չէր ցուցաբերում առաջավորասիական տարածաշրջանի քաղաքական իրադարձություններում: Նման արշավանք դժվար է պատկերացնել դրա գրգռապատճառների բացակայության տեսանկյունից:

Ռուսա II-ի հիշատակած Մուշկինի երկրի արևելափոքրասիական տեղադրության դեպքում պատկերը կարող է կտրուկ փոխվել: Եթե Խաթեն Մելիդն է, իսկ Խալիտուն՝ Խաղտիքը, ապա պարզ կդառնա, որ Ռուսա II-ի հակառակորդ(ներ)ը այստեղ վերինեփրատյան շրջանի երկրներն էին, որոնցից առնվազն մեկը պիտի Մուդալլուի Մելիդը լիներ: Հիշենք նաև, որ այս պահին կիմմերներն արդեն գտնվում էին արևելյան Փոքր Ասիայում (Թեուշպայի կիմմերները): Այս պարագայում, հավանաբար, ավելի շուտ կարելի է խոսել Ուրարտուի ճնշման տակ դեպի արևմուտք կիմմերների տեղաշարժի, քան ուրարտա-կիմմերական դաշինքի մասին: Կիմմերները հավասարապես վտանգավոր էին ինչպես Ուրարտուի, այնպես էլ Ասորեստանի համար: Կիմմերական գործոնը կարելի է համեմատել նույն ժամանակներում Առաջավոր Ասիայում հայտնված սկյութների հետ: Հիշենք մ.թ.ա.674–672 թ. Ասորեստանի դեմ մարերի բարձրացրած ապստամբությանը Պարտատուայի սկյութների մասնակցության փաստը[36]: Ակնհայտորեն կիմմերները և սկյութները օգտագործվում էին Ուրարտուի և Ասորեստանի ծայրամասային կախյալ երկրների կողմից իրենց անջատողական ծրագրերում: Ավելորդ չի լինի նշել, որ արդեն այս ժամանակաշրջանից նկատվում է Ուրարտուի և Ասորեստանի շահերի մերձեցում, որը վկայված է Աշշուրբանապալի տեքստերում[37]: Այսուհետև այս երկու պետությունների արտաքին քաղաքական ձեռնարկումներում գերիշխում էր տարածքա-

35 И. М. Дьяконов. ПАН, с.172 сл.

36 *ARAB II: §§ 517, 533.*

37 *Աշշուրբանապալը հիշատակում է Ուրարտուի արքա Ռուսա II-ի գեսպանությունը Հյուսիսային Միջագետքի Արբելա քաղաք՝ երկու երկրների միջև խաղաղություն հաստատելու առաջարկով (ARAB II: §§ 871, 1035, 1046):*

յին ամբողջականության պահպանման միտումը: Այսպիսի իրավիճակում արևելափոքրասիական երկրների համար, որոնք քիչ ավելի վաղ փուլում գտնվում էին Ասորեստանի և Ուրարտուի գերիշխանության կամ քաղաքական ազդեցության ոլորտում, կիմմերների հայտնվելը այդ գերիշխանության կամ ազդեցության վերացման լավ հնարավորություն էր ընձեռում:

Ահա այսպես են ներկայանում մեզ մ.թ.ա.VII դարի առաջին քառորդում ուսումնասիրվող տարածաշրջանում տեղ գտած քաղաքական գործընթացները: Սկզբնաղբյուրները հնարավորություն չեն ընձեռում պարզելու Ասորեստանի կամ Ուրարտուի նկատմամբ կիմմերների և Մելիդ-Թաբալի պետության ձեռնարկած ագրեսիվ քայլերի առկայությունը: Սակայն արդեն Թուգդամմեի մահից հետո, Մադիոսի սկյութների արշավանքը Փոքր Ասիա և այստեղ կիմմերական տիրապետության վերացումը վկայում են նման վտանգի գոյության օգտին: Հայտնի է, որ Պարտատուայի որդի Մադիոսը ինչ-որ պահ հարում է Ասորեստանին և մասնակցում Աշշուրբանապալի դեմ ստեղծված դաշինքի (Մարաստան, Բաբելոնիա, Էլամ) ջախջախմանը[38]: Այս փաստը կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ: Հզորացող Մարաստանն այլևս ռազմատենչ սկյութների օգնության կարիքը չէր զգում, մանավանդ որ ուներ Էլամի և Բաբելոնիայի պես լուրջ դաշնակիցներ: Աշշուրբանապալը փայլուն կերպով կարողացավ օգտագործել սկյութներին՝ Ասորեստանի քաղաքական հակառակորդների դեմ իր պայքարում: Պետք է ենթադրել, որ Մադիոսի արշավանքը Փոքր Ասիա տեղի է ունեցել ոչ թե Ուրարտուի վրայով, որի հետևանքով այն խիստ թուլացել է, ինչպես ենթադրվում է[39], այլ արդեն այս պահին Ասորեստանի բնական դաշնակից Ուրարտուի համաձայնությամբ:

Այժմ փորձենք ներկայացնել Փոքր Ասիայում տիրող իրավիճակը Թուգդամմե-Լիգդամիսի գործունեության վերջին փուլում:

Ըստ Աշշուրբանապալի տեքստերից մեկի[40], մ.թ.ա.644 թ. Սարգեսի գրավումից և Գիդեսի զոհվելուց հետո Թուգդամմեն ինչ-որ պահ բանակցություններ է սկսում Աշշուրբանապալի հետ, սակայն հետո կրկին թշնամական գիրք է բռնում, որի համար էլ պատժվում է աստվածների կողմից և մահանում է: Իսկ մինչ այդ նա դաշինք էր կնքել Թաբալի արքա [...]-ուսսիի՝ *Մուգալլուի որդու հետ[41]: Նույն տեղում հաղորդվում է* [...]-ուսսիի

---

38 *Ասորեստանի և սկյութների մերձեցմանը պիտի որոշակիորեն նպաստեր նաև Ասարհադդոնի դստեր ամուսնությունը սկյութների առաջնորդ Պարտատուայի հետ, որը, բնականաբար, ուղղված էր սկյութա-մարական դաշինքի վերացմանը (И. М. Дьяконов. История Мидии. М.-Л., 1956, с.272 сл.): Աշշուրբանապալը կարող էր օգտագործել այս հանգամանքը, եթե, իհարկե, Մադիոսը Ասարհադդոնի դստեր որդին էր:*

39 И. М. Дьяконов. ПАН, с.174.

40 R. Campbell-Thompson and R. W. Hutchinson. Annals of Archaeology and Anthropology 20, 1933, Ishtar Slabs, lines 158ff.

41 Idem. Ishtar Slabs, lines 141ff.; M. Cogan, H. Tadmor. Gyges and Ashurbanipal: A Study in Literary Transmission.– Orientalia 46, fasc.1, 1977, p.80. *Փոքր Ասիայում հաստատված կիմմեր-*

պատժվելու մասին Աշշուր աստծո կողմից, որից հետո Թաբալը կրկին ստիպված է լինում ընդունելու Ասորեստանի դերիշխանությունը:

Թուդդամմեի մահը թվագրվում է մոտավորապես մ.թ.ա.640 թ.: Ըստ Ատրաբոնի (14.1.40; 13.4.8; 1.3.21), Լիդիայի արքա Արդիսի կառավարման յոթերորդ տարում Սարդեսը նվաճվել է տրերների ե. լիկիացիների կողմից, որոնց առաջնորդում էր Քոբոսը. դրանից հետո վերջինս պարտվել է Մադիոսի կողմից առաջնորդվող սկյութներից: Եթե ընդունենք, որ Ստրաբոնի նշած թիվը ճիշտ է, ուրեմն Սարդեսի երկրորդ նվաճումը պիտի տեղի ունենար Թուդդամմեի մահից երկու-երեք տարի հետո, հավանաբար, Սանդաքշատրուի օրոք: Իսկ այս իրադարձությունից քիչ անց Փոքր Ասիայում հայտնվում է Մադիոսը և վերջ է դնում կիմմերների տիրապետությանը:

Թրակյան տրերների հիշատակությունը՝ լիկիացիների հետ միասին ինքնին արդեն հետաքրքիր է հետևյալ առումով: Աստվածաշնչում տրերների էպոնիմ Թիրասը համարվում է կիմմերների էպոնիմ Գոմերի որդին, ոը ակնարկում է այս երկու էթնիկական խմբերի միջև գոյություն ունեցող առնչությունների մասին: Հիմքեր կան ենթադրելու, որ տրերները կիմմերական զանգվածի մասն են կազմել[42]: Ինչ վերաբերում է լիկիացիներին, ապա ավելի ուշ՝ մ.թ.ա.VI դարում նրանք որպես Կրեսոսի կողմից չնվաճված ժողովուրդ հիշատակվում են Կիլիկիայի լեռնային շրջաններում[43], այսինքն, մոտավորապես այնտեղ, որտեղ տեղադրվում է Խիլակկուն: Ասվածի հիման վրա կարելի է ենթադրել, որ Սարդեսի երկրորդ նվաճումը պիտի իրականացվեր կիմմերական ցեղերից մեկի կողմից՝ Խիլակկուի աջակցությամբ: Որ այս ժամանակաշրջանում Խիլակկուն իրենից բավական լուրջ ուժ է ներկայացրել, կարելի է համոզվել ինչպես Աշշուրբանապալի տեքստերում պահպանված հիշատակություններից (տես վերը), այնպես էլ մ.թ.ա.VI դարում Կիլիկիայի անկախ թագավորության գոյության փաս-

---

ների և Ասորեստանի միջև մշտապես լարված փոխհարաբերությունների մասին կարելի է անուղղակիորեն եզրակացնել Թուգդամմեին տրվող մակդիրներից: Այսպես, Աշշուրբանապալի տեքստերից մեկը հետևյալ արտահայտությամբ է բնորոշում այս կիմմերական առաջնորդին՝ ᵐTug-dam-me-i Šàr umman manda tab-nit ti-amat tam-Šil ᵈ[gallê] «Ումմանմանդայի արքա, Թիամաթի արարվածք, [հրեշ]ակերպ էակ» (M.Streck. Assurbanipal ..., S.280, VS 20):

42 Ուշագրավ է, որ Ստրաբոնը կիմմերներին անվանում է տրերներ (Страбон. География в 17 книгах (пер.Г.А.Стратановского). М., 1964, I,3,21).

43 Հերոդոտոս. I 28. Խիլակկուն գտնվում էր Կուեից (Դաշտային Կիլիկիա) հյուսիս և հյուսիս-արևմուտք, մոտավորապես Քարոտ Կիլիկիայում, այսինքն, այն ներառնում էր լուվիական Թաբալի հարավային և արևմտյան շրջանները. այս պետության սահմանների ճշգրտման համար տե՛ս L. Zoroğlu. Cilicia Tracheia in the Iron Age: the Khilakku Problem.– In: Anatolian Iron Ages 3. The Proceedings of the Third Iron Ages Colloquium held at Van, 6–12 August 1990 (eds. A. Çilingiroğlu and D.H.French), London, 1994, p.301ff.

տից[44]: Այս ետնախորքի վրա Մադիոսի սկյութների արշավանքը Փոքր Ասիա ընդդեմ կիմմերների և կիմմերների ու Թաբալի արքայի հակաասորեստանյան դիրքորոշման մասին Աշշուրբանապալի տեքստի հաղորդումը նոր իմաստ է ստանում: Մադիոսի արշավանքը, որ տեղի էր ունեցել մ.թ.ա.637 թ. որոշ ժամանակ անց, պիտի Ասորեստանի քաղաքականության արդյունքը լիներ, որը նման եղանակով փորձում էր չեզոքացնել հյուսիս-արևմուտքից եկող սպառնալիքը և որոշակի ազդեցություն ձեռք բերել անդրտավրոսյան երկրների նկատմամբ: Ըստ Աշշուրբանապալի, այս ձեռնարկումը հաջողվել էր. կիմմերները վտարվել էին, իսկ Թաբալի արքա [...]-ուսսին՝ զոհվել էր, որից հետո Թաբալը կրկին անցել էր Ասորեստանի գերիշխանության տակ: Հաղթանակից հետո, ըստ Եվսեբիոսի[45], սկյութները մ.թ.ա.633–632 թթ. հասել էին մինչև Պաղեստին, որին հաջորդել էր նրանց 28-ամյա տիրապետությունը Ասիայում[46]:

Այս պահից սկսած սեպագրական տեղեկությունները արևելյան Փոքր Ասիայի պատմության վերաբերյալ ընդհատվում են: Աշշուրբանապալից հետո Ասորեստանում սկսված ներքաղաքական բարդությունները, այնուհետև Բաբելոնի և Մարաստանի ձեռնարկած տևական պատերազմը ընդդեմ Ասորեստանի, այլևս թույլ չտվեցին վերջինիս զբաղվելու այս հեռավոր շրջաններով: Առաջավորասիական մեծ քաղաքականությունը այս ժամանակահատվածում գլխավորապես բևեռված էր մի կողմից Ասորեստանի, մյուս կողմից՝ Մարաստանի, Բաբելոնիայի և Էլամի տևական հակամարտության վրա: Միայն մ.թ.ա.605 թ. Խառանի ճակատամարտից հետո է վերսկսվում Բաբելոնիայի և Մարաստանի արտաքին քաղաքական ակտիվության փուլը՝ առաջինը՝ դեպի արևմուտք (Տավրոսից հարավ), երկրորդը՝ նույնպես արևմուտք, սակայն Տավրոսից հյուսիս:

Մեր ուսումնասիրության նպատակների տեսանկյունից առավել կարևոր է Մարաստանի արևմտյան քաղաքականությունը: Հայտնի է, որ մ.թ.ա.590–585 թթ. տեղի է ունեցել մեծ պատերազմ Մարաստանի և Լիդիայի միջև, որի ավարտից հետո երկու երկրների միջև հաստատված սահմանը անցել է Հալիս գետով[47]: Մ.թ.ա.630-ական թթ. հետո անցած շուրջ 40 տարիների ընթացքում արևելյան Փոքր Ասիայում հազիվ թե լուրջ էթնոքաղաքական փոփոխություններ տեղի ունեցած լինեին: Եզեկիելի ճառի

---

44 Հայտնի է, որ մ.թ.ա.590–585 թթ. Մարաստանի և Լիդիայի միջև ընթացած պատերազմի ավարտին կնքված խաղաղության պայմանագրում միջնորդներից մեկը Կիլիկիայի արքա Սիեննեսիսն էր (Հերոդոտոս. I, 74):

45 Eusebi Chronicorum Canonum (ed.Schoene). Zurich, 1866, II, S.88–89.

46 Ըստ Հերոդոտոսի (I 106), դրանից հետո Ասիայում սկսվել է սկյութների 28-ամյա տիրապետությունը: Սակայն այս հաղորդումը հակասության մեջ է այլ հեղինակների տեղեկությունների հետ, ըստ որոնց, սկյութների տիրապետությունը տևել է 15 տարի (Պոմպեոս Տրոգոս, Հուստինոս և այլն, հղվում է ըստ A. S p a l i n g e r. Journal of American Oriental Society 98, 1978, N4, p.408):

47 Հերոդոտոս. I 106.

համապատասխան հատվածի (27:10-15) հիման վրա արված եզրակացությունները[48] թույլ են տալիս հայտարարելու, որ այստեղ ակնհայտորեն կարելի է խոսել քաղաքական ավանդույթների շարունակականության մասին: Հաղիվ թե Աստվածաշնչային «Թաբալը» և «Տուն Թորգոման» մ.թ.ա.580-ական թթ. թվագրվող տեքստում ղրկված լինեին մի քանի տասնամյակ առաջ ունեցած էթնոքաղաքական բովանդակությունից:

* * *

Ամփոփելով, անհրաժեշտ ենք համարում ներկայացնելու մեր պատկերացումները մ.թ.ա.VII դարի վերջին քառորդում արևելյան Փոքր Ասիայում տեղի ունեցած իրադարձությունները Արամ նահապետի խորենացիական կերպարին առնչելու հնարավորությունների մասին, որոնք հենվում են հոդվածում բերված փաստական նյութի վրա:

Արամ նահապետի գործունեության թվագրումը մ.թ.ա.VII դարի վերջին քառորդով, որը որոշակիորեն կախված է սկյութական առաջնորդ Մադիոսի և Խորենացու հիշատակած Նյուքար Մադեսի, Լիդիայի արքա (ըստ Բ.Հարությունյանի՝ արքայորդի) Սադիատտեսի և Պայապիս Քաաղեայի համադրություններից, լուրջ առարկությունների տեղիք է տալիս:

Պարտատուայի որդի Մադիոսի դեմ պատերազմի և վերջինիս մահապատժի թվադրումը մ.թ.ա.631 թ. որևէ լուրջ կռվան չունի: Մադիոսը ղրանից մի քանի տարի առաջ արդեն գտնվում էր Փոքր Ասիայում, որտեղից էլ անցել էր Պաղեստին: Հազիվ թե նա այնտեղից ետ է վերադարձել:

Արամ նահապետի փոքրասիական արշավանքի թվադրումը մ.թ.ա. 620–617 թթ. էլ ավելի մեծ տարակուսանք է առաջ բերում: Հեղինակը հենվում է Լիդիայի Մերմնադյան արքայատոհմի կառավարման հերոդոտոսյան թվադրման վրա: Սակայն մեզ հայտնի են առնվազն երկու այլ թվագրություններ և, հարկ է նշել, որ դրանցից որևէ մեկին առայժմ դժվար է նախապատվություն տալ: Ներկայացնենք այդ արքայացանկերը յուրաքանչյուր արքային հատկացված կառավարման տարիներով.

	Եվսեբիոս Կեսարացի	Հերոդոտոս	Եվսեբիոս (հայ.թարգմ)
Գիգես	36	38	35
Արդիս	38	49	37
Սադիատտես	15	12	5
Ալիաթթես	49	57	49
Կրեսոս	15	14	15

48 И. М. Дьяконов. Малая Азия и Армения, с.60 сл.

Եթե վերջին արքա Կրեսոսի կառավարման ավարտը տեղադրում ենք մ.թ.ա.546 թ., ապա հետադարձ հաշվարկով Լիդիայի արքաների կառավարման տարեթվերը հետևյալ տեսքն են ստանում.

Գիգես	699-663	716-678	687-652
Արդիս	663-625	678-629	652-615
Սադիատտես	625-610	629-617	615-610
Ալիաթթես	610-561	617-560	610-561
Կրեսոս	561-546	560-546	561-546

Վերը բերված երեք ցուցակների առկայությունն արդեն իսկ կարող է վկայել աղբյուրներում տիրող ժամանակագրական զգալի շփոթի առկայության մասին: Կիմմերների կողմից Սարդեսի գրավման և Գիգեսի մահվան՝ մեր հոդվածում կիրառվող ճշգրտված մ.թ.ա.644 թ. ակնհայտ հակասության մեջ է գտնվում ինչպես Եվսեբիոսի երկու հրատարակությունների, այնպես էլ Հերոդոտոսի տվյալների հետ: Այսինքն, ստիպված ենք ընդունել, որ անհրաժեշտ է արտակարգ զգուշավորություն հանգես բերել պատմական իրադարձությունների՝ անտիկ աղբյուրների միջոցով կատարվող վերականգնումների նկատմամբ: Սա միակ դեպքը չէ, երբ ուսումնասիրվող խնդրի առնչությամբ բախվում ենք նման բարդությունների հետ: Ասիայում սկյութների 28-ամյա տիրապետության մասին Հերոդոտոսի տեղեկությունը նույնպես չի կիսվում անտիկ շրջանի այլ հեղինակների կողմից[49]:

Եվ, վերջապես, քննարկվող խնդրի հիմնահարցի մասին: Եթե նույնիսկ մի պահ ենթադրենք, որ մասնագիտական հրատարակություններում այսօր Ուրարտուի արքայացանկի վերջին ներկայացուցիչներից մեկը՝ Էրիմենան սկյութների արշավանքից հետո իշխանության եկած հայկական արքայատոհմի հիմնադիրն էր, որը Պատմահոր երկում հայտնի է որպես Արամ նահապետ, ապա արդյոք նրան վերագրելի են այն բոլոր քաջագործությունները, որոնք հիշատակում է Խորենացին:

Սկզբնաղբյուրների ներկա վիճակը հնարավորություն չի ընձեռում ընդունելու Էրիմենա-Արամի գործունեության այնպիսի լայն աշխարհագրություն, ինչպիսին ներկայացվում է Բ. Հարությունյանի ուսումնասիրության մեջ: Այդպիսի արշավանք դժվար է պատկերացնել թեկուզ այն պատճառով, որ մեզ լավ հայտնի են մ.թ.ա. VII դարում Փոքր Ասիայում առկա բոլոր հիմնական քաղաքական ուժերը: Ավելին, առավել դժվար է պատկերացնել Արամի փոքրասիական արշավանքի դրդապատճառները, Տուշպա–Վանում կամ Արգիշտիխինիլի–Արմավիրում կառավարող «Հայոց արքա» Էրիմենա–Արամի և Լիդիայի շահերի բախումը: «Կյուրոպեդիայում» հիշատակվող անանուն հայոց արքան ակնհայտորեն այն հզոր տիրակալը չէր, որին վերագրելի են Արամ նահապետի գործերը: Կարծում եմ,

---

49 Տե՛ս ծանոթ. 46.

որ Արամին և նրա պետությունը պիտի փնտրել Նահապետի փոքրասիական գործունեության թատերաբեմում, ինչի մասին ակնարկում է նաև Աստվածաշունչը: Մ.թ.ա.VI դարի սկզբներով թվագրվող Եզեկիելի ճառում հիշատակվող ժողովուրդների ցուցակում գտնում ենք «Տուն Թորգոման» (տես վերը), նույն ինքը արևելափոքրասիական Մելիդ-Թաբալը: Այն պետությունը, որը ձևավորվել էր դեռևս մ.թ.ա.705–695 թթ. որպես ինքնուրույն քաղաքական միավոր, և որը հաջողությամբ դիմագրավում էր Սինաքերիբի և Ասարհադդոնի արշավանքներին: Իսկ տարածաշրջանում կիմմերների ակտիվության փուլում, ամենայն հավանականությամբ, հանդիսանում էր նրանց դաշնակիցը Լիդիայի դեմ պատերազմներում: Եթե իրոք բավարար հիմնավորում ունի վերջերս առաջ քաշված տեսակետը, ըստ որի Մելիդ-Թաբալի պետությունը (=Տուն Թորգոմայ) հանդիսացել է Թաբալյան Ատունայի անմիջական ժառանգորդը[50], ապա Մաժաք–Կեսարիայի նվաճումը հնարավոր կլինի տեղադրելու մ.թ.ա.710 թ. նախորդող շրջանում, մի ժամանակահատված, որը շուրջ մեկ դարով ավելի վաղ է, քան Էրիմենա–Արամին վերադրվող փոքրասիական արշավանքը:

Եզրափակելով մեր հետազոտությունը, անհրաժեշտ է նշել Խորենացու Պատմության Առաջին գրքում տեղ գտած հայոց ծագումնաբանության գիտական արժեքավորման հետ կապված մի մեթոդական խնդիր: Առաջին հայկյանների կամ հայոց նախապատմության «հերոսական դարաշրջանի» գիտարկումը մեկ միասնական քաղաքական դաշտում, թվում է, անհեռանկարային բնագավառ է: «Հայկյան» փուլը տիպաբանորեն որևէ կերպ համեմատելի չէ ոչ Արտաշեսյան կամ Արշակունյաց, ոչ էլ նույնիսկ Երվանդյան փուլի հետ: Վերջիններիս օրոք հայկական պետությունը ընդգրկել է ողջ Հայկական Լեռնաշխարհը կամ դրա զգալի մասը: Իսկ «Հայկյան Հայաստանը» ակնհայտորեն ներկայացնում է մի ժամանակաշրջան, երբ հայկական էթնոսի զարդացումը ընթանում էր կենտրոնացման միտումով, մի բան, որ արդեն հիմնականում ավարտվել էր Երվանդյան փուլում: Այստեղից էլ այն բոլոր բարդությունները, որոնք ծագում են Հայկի տոհմի ներկայացուցիչներին կոնկրետ պատմական անձնավորում հաղորդելու փորձերում: Նման ձեռնարկումներում հնարավոր են ինչպես երկու և ավելի անձնավորություններին մեկում միավորելու, այնպես էլ հակառակ տիպի սխալները: Մեր համոզմամբ, Խորենացու Հայկյանները ներկայացնում են մի ժամանակաշրջան, երբ Հայկական լեռնաշխարհում զուգահեռ գոյություն են ունեցել հայկական էթնոսի ձևավորման մի քանի ինքնուրույն կենտրոններ՝ իրենց համապատասխան քաղաքական վերնաշենքով: Ներկայումս մեր տրամադրության տակ եղած սկզբնաղբյուրների ընձեռած հնարավորությունների սահմաններում կարելի է մատնանշել այդպիսի առնվազն չորս հիմնական կենտրոններ՝ վերինեփրատյան շրջան (Ծոփք, Մա-

50 Ա. Քոսյան. Տուն Թորգոմայ, էջ 21–32.

լաթիա = Տուն Թորդոմայ), Վանա լճի արևմտյան ավազան (Ուրմե, Շուբրիա և հարակից շրջաններ), Վանա և Ուրմիա լճերի միջև ընկած տարածքը (Տուշպա–Վան կենտրոնով), Էթիունի (Արգիշտիխինիլի–Արմավիր կենտրոնով): Ուրարտական տերության գոյության շրջանում վերոհիշյալ տարածքները գտնվել են նրա անմիջական ենթակայության տակ կամ ազդեցության ոլորտում: Դեռևս ուրարտական փուլում արդեն նկատվում են սրանց մի մասի ներսում սկսված քաղաքական վերելքի ակնհայտ գործընթացներ (Էթիունի, Տուն Թորդոմա, հետո՝ Շուբրիա): Ավելի ուշ, մ.թ.ա.VII դ. ընթացքում Ուրարտուի հզորության անկումը պիտի նման պրոցեսների հանգեցներ նաև մյուս հայաբնակ կենտրոններում: Առաջին Հայկյանների աստիճանական տարածումը «Թորգոմյան արեալից» դեպի Հայկական լեռնաշխարհի տարբեր շրջաններ, թերևս, ավելի նպատակահարմար է մեկնաբանել որպես մի քանի հայալեզու (ինչու չէ, նաև միայն մասնակիորեն հայալեզու) պետական կազմավորումների մասին հիշողությունների արհեստական միակցում, որը Խորենացու մոտ ներկայանում է «Հայկյան տոհմի» անդամների տեղաշարժերի տեսքով: Ի վերջո, չի կարելի անտեսել այն ակնառու փաստը, որ Արամը հնդեվրոպական ազգածին նահապետի տիպիկ կերպար է, որը պիտի ներառներ տարբեր ժամանակաշրջանների իրողություններ[51]: Այսինքն, ավելի քան հավանական է, որ Արամ նահապետի խնդրում գործ ունենք ոչ թե մեկ, այլ տարբեր դարաշրջաններում ապրած երկու կամ ավելի անձնավորությունների գործերի արհեստական միավորման երևույթի հետ:

Կրկին անդրադառնալով Բ. Հարությունյանի վարկածին, անհրաժեշտ է ընդունել, որ այն իր մեջ պարունակում է Առաջին Հայկյանների անձնավորման խնդրի լուծման կարևորագույն ուղենիշներ: Անվիճելի է, որ հեղինակի կողմից հետազոտված ժամանակաշրջանը, մի շարք փաստարկների ճնշման տակ, պիտի ինչ-որ կերպ արտացոլվեր Արամ նահապետի կերպարում: Մեր կարծիքով, առաջարկված վարկածը ավելի կշահեր, եթե չսահմանափակվեր միայն Էրիմենա–Արամի պետությամբ (Ուրարտու–Վանի թագավորություն), այլ ընդգրկեր Եփրատից արևմուտք և արևելք ընկած հետագայի Աքեմենյան XIII սատրապության նույնպես հայալեզու աբեալը: Թվում է, Արամ նահապետին վերագրվող պատերազմները անհամեմատ ավելի հեշտ է տեղայնացնել վերինեփրատյան Մելիդում և հարակից շրջաններում մ.թ.ա.VII դարում գոյություն ունեցած թագավորության տարածքում: Համենայնդեպս, այստեղ առկա է Արամի գործունեության բոլոր երեք բաղադրիչների պատմական ետնախորքը.

1) Հաղթանակ Պայապիս Քաաղեայի նկատմամբ. Լիգիայի արքա Գիգեսի պարտությունը և վախճանը կիմմերական առաջնորդ Թուգդամմե-

---

51 Ա. Պետրոսյան. Արամի առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում և հայոց ազգածագման խնդիրը. Երևան, 1997:

Լիգդամիսի հարձակման հետևանքով, այս ձեռնարկման մեջ Մելիդի մասնակցությունը (տես վերը տեքստում Մուգալլուի որդի [...]-ուսսիի *և կիմմերների գաշինքը):*

2) Պատերազմ Նյուքար Մադեսի դեմ. *Սկյութական առաջնորդ Մադիոսի արշավանքը Փոքր Ասիա՝ կիմմերների դեմ մ.թ.ա.637–632 թթ. միջև. կիմմերների գաշնակից Մելիդը նույնպես պիտի մասնակից լիներ սկյութների դեմ պատերազմին:*

3) Պատերազմ Բարշամի դեմ. *Չնայած առկա սկզբնաղբյուրներում ուղղակի վկայություններ չկան Մելիդի և Ասորեստանի միջև մ.թ.ա.675 թ. հետո տեղի ունեցած ընդհարումների մասին, սակայն Աշշուրբանապալի տեքստերը ստիպում են ենթադրել, որ երկու պետությունների փոխհարաբերությունները ամենևին բարիդրացիական չեն եղել: Հենց թեկուզ Մելիդի և կիմմերների միջև դաշինքի գոյությունը կարող է վկայել հօգուտ թշնամական հարաբերությունների, առնվազն* [...]-ուսսիի *օրոք: Վերջապես, ավելի հեշտ է պատկերացնել Քսենոփոնի հիշատակած արմենների և ռազմատենչ խալդայների հարևանությունը արևելափոքրասիական տարածաշրջանում, քան որևէ այլ վայրում: Հիշենք Ռուսա II-ի արշավանքը դեպի Մուշկինի, Խաթե և Խալիտու երկրներ, որոնցից Խաթեն, անկասկած, Մելիդն է, իսկ Խալիտուն՝ Խաղտիքը (տես վերը տեքստում):*

НАХАПЕТ АРАМ В КАППАДОКИИ
(К одной гипотезе)

Доктор истор. наук А. В. КОСЯН

Резюме

В статье рассматривается высказанная недавно в книге ведущего специалиста по истории древней Армении Б. Арутюняна гипотеза, согласно которой, прототипом одного из наиболее видных представителей "первых Хайкидов" Мовсеса Хоренаци - *нахапета* Арама мог быть упомянутый во второй половине VII в. до н.э. урартский царь Эримена. На основании клинописных ассирийских, иероглифических лувийских и античных источников выдвигается предположение о том, что историческая обстановка, обрисованная Хоренаци для периода нахапета Арама, более подходит к восточномалоазийскому царству Мелид (Малатья), нежели к сильно ослабленному во второй половине VII в. до н.э. урартскому государству. В течение большей части VII в. до н.э. мелидское царство представляло собой сильное государственное объединение, которое, в союзе с малоазийскими киммерийцами, успешно противостояло Ассирии, Лидии, а в 630-х годах - скифам Мадия. Согласно предлагаемой контргипотезе, указанные враги мелидского царства вполне могли быть олицетворены в "Истории" Мовсеса Хоренаци в качестве Нюкара Мадеса (скифский вождь Мадий), Баршама (Ассирия периода Ашшурбанапала) и Паяписа Каахеа (некий царь Лидии, возможно, Ардис и Садюатт).

ARAM NAHAPET IN CAPPADOCIA

(On a hypothesis)

Doctor of Hist. Sciences A. V. KOSSIAN

Summary

The author discusses the recent theory put down by Prof. Babken Haroutunian, according to which one of the "First Haykides" figuring in the "History of Armenia" of Movses Khorenatsi, namely Aram *nahapet*, should be identified with the Urartian king Erimena (second half of the VII c. B. C.). The analyses of Cuneiform Assyrian, Hieroglyphic Luwian and Classical Greek sources shows that the historical background for the period of Khorenatsi's Aram *nahapet* fits much better the kingdom of Melid (Malatya) in eastern Anatolia rather than the extremely weak Urartu. During the greater part of the VII c. B. C. Melid was a strong kingdom which in alliance with the Cimmerians of Asia Minor was successfully opposing Assyria, Lydia, and from 630's the Scythians of Madios. According to the contrhypotheses, the above-mentioned enemies of Melid could have been personalized in the "History" of Khorenatsi as Nyukar Mades (Scythian chieftain Madios), Barsham (Assyria of Ashshurbanapal), and Payapis Kaaghea (some Lydian king, possibly, Ardys or Saduattes).